

ԿԱՐԾԻՔ

Սոնգ Շեյուի «Անձնային առանձնահատկությունների և ակադեմիական ներգրավվածության դերը ուսանողների հոգեբանական բարեկեցության մեջ» թեմայով ԺԹ.00.01. «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ժամանակակից աշխարհում, կրթությունը դիտարկվում է որպես բարեկեցիկ ապագա ունենալու գրավականներից՝ թերևս ամենակարևորներից մեկը: Ընդհանուր կրթության՝ իբրև անբաժանելի և կարևորագույն հատված պետք է նշել բարձրագույն կրթությունը, ինչն այդ շրջայի կարևոր օղակն է: Բարձրագույն կրթության առաքելություններից է նաև այն, որպեսզի ուսանողների համար ստեղծվի ակադեմիական միջավայր, ինչը միայն բուն գիտելիքների մատուցմամբ չի որոշակիացվում, այլև այնպիսի գործոններով, ինչպիսիք են. փոխհարաբերությունները՝ ուսանող-ուսանող, ուսանող-դասախոս, ուսանող-վարչական մաս և այլն, քննական շրջանի կազմակերպում, քննական արդյունքների օբյեկտիվություն, անհաջողությունների առկայության պարագայում նոր հնարավորությունների ստեղծում և այլն, որոնք դառնում են ակադեմիական միջավայրի ձևավորման հենքը:

Ակադեմիական միջավայրի ազդեցության բացահայտումն ուսանողների հոգեբանական բարեկեցության վրա կլինեք ոչ ամբողջական և թերի, եթե այն լինեք միակողմանի (միայն ակադեմիական միջավայր) ուսումնասիրություն, հաշվի չառնելով անձնային հոգեբանական առանձնահատկությունները: Այսպիսի մոտեցումը թույլ կտա վեր հանել այնպիսի խնդիրներ և գտնել այնպիսի լուծումներ, որոնք կարող են ուղեցույց դառնալ ուսանողների հոգեբանական բարեկեցությանն ուղղված աշխատանքների գործում, ինչը կարելի է համարել այդ շրջանում (երիտասարդության) կարևորագույն խնդիրներից մեկը:

Այսպիսով, վերոնշյալից (և աշխատանքում բերված այլ մոտեցումներից) ելնելով, ատենախոսության թեման հիմնավորված և կարևոր ենք համարում, միաժամանակ ցանկանալով ընդգծել այն, որ աշխատանքի նպատակը, խնդիրները, վարկածի հաստատմանն ուղղված գիտական հետազոտությունները թույլ են տալիս թեմայի ընտրությունը համարել գիտականորեն ստուգելի:

Ատենախոսության ներածական մասում հաջորդաբար ներկայացվում են ուսումնասիրության նպատակը, հետազոտական խնդիրները (թվով 4), վարկածը, հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական հիմքերը, հետազոտության նորույթը, տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության սեղմագիրն արտահայտում է աշխատանքի հիմնական դրույթները և բովանդակությունը:

Անհրաժեշտ ենք համարում նաև նշել, որ աշխատանքը գերծ չէ թերություններից և բացթողումներից, որոնց վերաբերյալ կխոսենք ներքևում և կցանկանանք ատենախոսը դրանց վերաբերյալ պարզաբանումներ և մեկնաբանություններ կատարի:

1. Հետազոտության նորույթի 2-րդ կետում նշվում է, որ. «Սույն հետազոտությունը հիմնավորված ցույց է տալիս, որ ուսանողների ակադեմիական ներգրավվածությունը առավել նշանակալի դեր ունի ուսանողների հոգեբանական բարեկեցության պահպանման համար, քան սոցիալական ներգրավվածությունը, ինչը կարելի է պայմանավորվել տարիքին բնորոշ ինքնազարգացման դրդապատճառներով» էջ 12:

Կցանկանանք, որպեսզի ատենախոսը նման պնդման՝ «...ինչը կարելի է պայմանավորվել տարիքին բնորոշ ինքնազարգացման դրդապատճառներով» գիտական (հետազոտական) հիմնավորումը ներկայացնի (այլապես, կարող ենք ենթադրել, որ այն կարող է (նաև) այլ գործոններով պայմանավորված լինել):

2. Աշխատանքի երկրորդ գլխում բերված է հետևյալ մոտեցումը, «Դրական հույզերի, դրական հոգեբանության և ակադեմիական ներգրավվածության միջև կա

նշանակալի կապ» էջ 38: Ցանկանում ենք մեկնաբանել, ինչ նկատի ունի ատենախոսը, ասելով «դրական հոգեբանություն»:

3. Աշխատանքում նշվում է, որ «...ձախողումից խուսափելու «մաքուր» մոտիվացիան, երբ զուրկ է հաջողությանը զուգահեռ ձգտող մղումից, վնասակար է հոգեբանական բարեկեցության, հետևաբար նաև հոգեկան առողջության համար» էջ 74: Այս մոտեցումը ենթադրում է, որ հոգեբանական բարեկեցության բացակայությունը կամ նվազ լինելը, վնասակար է հոգեկան առողջության համար: Ցանկանում ենք ատենախոսը աշխատանքի համատեքստում հիմնավորի հոգեբանական բարեկեցության և հոգեկան առողջության կապը (հնարավոր է, օրինակ, հոգեբանական բարեկեցության բացակայությունը կոմպենսացվի այլ հոգեբանական գործոններով և թույլ չտա հոգեկան առողջության խնդիրներ) և ներկայացնի, թե հոգեկան առողջության ինչպիսի խանգարումներ է ենթադրվում (նկատի ունենալով ախտորոշումները ՀՄԴ 10, ՀՄԴ 11 կամ DSM 5) տվյալ համատեքստում: Այն համարում ենք կարևոր, քանի որ կախված հոգեկան առողջության խանգարման տեսակից, կարող է նոր էական կապեր ստեղծվել մեկնաբանությունների համար (արդյո՞ք բարեկեցության բացակայությունը, ասենք, հանդիսացել է հոգեկան խանգարման դրսևորման տրիգեր («էնդոգեն» բնույթի խանգարում), թե իբրև բուն պատճառ):

4. Եզրակացություն 5-ում՝ «Երկու հետազոտությունների արդյունքները փաստում են, որ այն իզական սեռի ուսանողները, ովքեր ունեն բարձր ակադեմիական ներգրավվածություն, հետևաբար և բարձր առաջադիմություն, հաճախակի են ունենում բարձր տազնապայնություն և կրթական սթրես՝ կանխարգելման վրա հիմնված, այսինքն՝ ձախողումից խուսափելու վարքագծի պատճառով» էջ 89:

Իզական սեռի ներկայացուցիչներին, որոշակի պայմաններից ելնելով, վերագրվում է բարձր տազնապայնություն, ինչի հիմնավորումը կցանկանայինք ատենախոսը ներկայացնել՝ տազնապայնության մակարդակին ուղղված հետազոտությունների արդյունքների միջոցով:

